

ԱԶԴԱՐԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ՔՈՒԵՅԹԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

P.O.Box: 8157, Salmiyeh 22052- Kuwait. Tel: 965-25614392, Fax: 965-25638312, e-mail: prelacy@armenianprelacykw.org

ՆՈՐ ՇՐՋԱՆ, Թ. Տարի, Թիւ 386, Ուրբաթ, 26 ՄԱՅԻՍ, 2017

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

Քուէթի մէջ Պահրէյնի Թագաւորին Ներկայացուցիչը Այցելեց Արամ Ա. Կաթողիկոսին

Քուէթի մէջ Պահրէյնի թագաւորի անձնական ներկայացուցիչ շէյխ Խալիֆա Պըն Ահմետ Ալ Խալիֆան, վեհափառ հայրապետին Քուէթ կատարած այցելութեան երկրորդ



օրը այցելեց Արամ Ա. կաթողիկոսին՝ իր իջեւանած պետական հիւրանոցին մէջ: Հանդիպման ներկայ էին նաեւ Քուէթի եւ շրջակայից թեմի առաջնորդ Մասիս Ծ. վրդ. Զօպույեան, Արաբական Միացեալ Էմիրութեանց եւ Քաթարի թեմի կաթողիկոսական փոխանորդ Մեսրոպ Ծ. վրդ. Սարգիսեան եւ կաթողիկոսարանի տեղեկատուական բաժանմունքի վարիչ Պետրոս վրդ. Մանուէլեան:

Շէյխ Խալիֆան իր բարեմաղթութիւնները ներկայացուց վեհափառ հայրապետին՝ շեշտելով, որ աւելի քան երբեք կրօններու ու մշակոյթներու երկխօսութիւնը եւ գործակցութիւնը հրամայական անհրաժեշտութիւն են ամբողջ աշխարհին մէջ: Ապա Պահրէյնի թագաւորին ներկայացուցիչը Արամ Ա. կաթողիկոսը հրաւիրեց իր պալատը՝ ներկայ գտնուելու ի պատիւ իրեն տրուելիք ճաշկերոյթին:

Ճաշկերոյթին վեհափառ հայրապետին կ'ընկերանային առաջնորդ հայրերը եւ Քուէթի թեմի Ազգային իշխանութեան ներկայացուցիչները. ներկայ էին նաեւ քրիստոնէայ

համայնքներու հոգևոր պետեր, պապական նուիրակը եւ շարք մը երկիրներու դեսպաններ:


Յանուն Պահրէյնի թագաւորին, ողջունելով վեհափառ հայրապետին ներկայութիւնը Քուէթի մէջ, շէյխ Խալիֆան մէջբերումներ կատարելով հայրապետին նախապէս Պահրէյնի համագումարի ընթացքին տուած դասախօսութենէն, անգամ մը եւս վեր առաւ միջկրօնական գործակցութեան անհրաժեշտութիւնը: Պատասխանելով շէյխ Խալիֆային ողջոյնի խօսքին՝ Արամ Ա. կաթողիկոս իր կարգին ընդգծեց երկխօսութիւնը գործակցութեամբ եւ համակցութեամբ թարգմանելու կարելորութիւնը՝ ներկայ բազմակրօն ու բազմամշակոյթ ընկերութեան մէջ: Արամ Ա. կաթողիկոս յիշեց անցեալին Պահրէյն տուած իր այցելութիւնը, միջազգային համագումարը եւ մանաւանդ համագումարին ճշդած ուղեգիծը գործընթացի վերածելու հրամայականը: Ապա տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում:

ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔ

Քուէթի Ազգային Վարժարանի Տնօրէնութիւնն ու Հոգաբարձութիւնը ջերմապէս կը շնորհաւորեն 20 Մայիս 2017ին, նորակառոյց Սրբոց Վարդանանց Եկեղեցոյ Օծման եւ Ազգ. Առաջնորդարանի բացման առիթներով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի ձեռամբ պարգեւատրուած շքանշանակիր բոլոր ազգայինները, ի մասնաւորի «ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏ»ի շքանշանին արժանացած Վարժարանիս Հոգաբարձութեան Ատենապետ՝ Տիար Ֆիլիփ Փաթաթանեանն ու «Ս. ՄԵՄՐՈՂ ՄԱՇՏՈՅ»ի շքանշանին արժանացած Ուսումնական Խորհուրդիս Ատենապետ՝ Տիար Եղիա Կարպուշեանը, մաղթելով բոլորին ուժ, կորով, բեղուն գործունէութիւն եւ յարաճուն վերելք:



«Եկեղեցին Պէտք Է Պայծառացնենք, Որպէսզի Եկեղեցիով Մենք Պայծառանանք». Քուէյթահայութեան Պատգամեց Արամ Ա. Վեհափառ Հայրապետ



«Ուրախացի՛ր, ծարաւ անապատ: Անապատը պիտի ցնծայ եւ պիտի ծաղկի շուշանի պէս»: Մարգարէական այս տողերը թարգմանը հանդիսացան քուէյթահայութեան անսահման ցնծութեան ու հոգեփոխութեան, երբ ուրբաթ, 19 մայիս 2017-ին, համայնքային կեանքը ծաղկազարդուեցաւ նորակառոյց Սրբոց Վարդանանց եկեղեցոյ օծման արարողութեամբ՝ ձեռամբ Արամ Ա. վեհափառ հայրապետին, Քուէյթի գաղութի ոսկեմատեանին մէջ անկիւնադարձային թուական մը արձանագրելով:

Երկամեակ մը առաջ Քուէյթի Ազգային առաջնորդարանն ու Սրբոց Վարդանանց եկեղեցին դատարկելու եւ կալուածատիրոջ յանձնելու ահագանգը ուժգնօրէն հնչեց քուէյթահայութեան կեանքին մէջ, եւ սեփական եկեղեցի մը ունենալու առաջնահերթութեան գաղափարը կեանքի կոչուեցաւ բաւական ծանր պայմաններու մէջ, սակայն շնորհիւ համայնքի հաւաքական կամքին ու քրտնաջան աշխատանքին, այսօր քուէյթեան անապատը ծաղկեցաւ իր հոգիի տաճար Ս. Վարդանանց եկեղեցիով:

Եկեղեցոյ շինութեան իրենց կարելոր նպաստը բերին տէր եւ տիկին Անուշաւան Նազարեան, տէր եւ տիկին Ֆիլիփ Փաթաթանեան, Մելիքսէթեան ընտանիք, Կիրակոս Տարագճեան, տէր եւ տիկին Մեմի Տարեան, տէր եւ տիկին Սեւակ Արծրունի, տէր եւ տիկին Զարեհ Յակոբեան, տէր եւ տիկին Գրիգոր Պետիրեան, տէր եւ տիկին Պետրոս Պետիրեան, տէր եւ տիկին Յակոբ Պերպերեան, տէր եւ տիկին Յարութիւն եւ Սիլվիա Սթանպուլեան, տէր եւ տիկին Մունիր Դարբինեան, տէր եւ տիկին Շոզէֆ եւ Նուէր Սեփիլեան, տէր եւ տիկին Կոստանդին Մումճեան, տէր եւ տիկին Պարգե Տեմիրճեան, ՀՕՍ ՔՄՍ, Յակոբ եւ Յարութ Պետիրեան եղբայրներ, Հինտոյեան ընտանիք, տէր եւ տիկին Պօղոս Այվազեան, տէր եւ տիկին Վիգէն Արսլանեան, Թասլաքեան ընտանիք, Գրիգոր Թիւթիւնճեան, Անահիտ Պօղոսեան, տէր եւ տիկին Յարութ Չաքարեան, ՀՅԴ ՔՔԵՄ, ՀԴՊՄ եւ Հայ առաքելական եկեղեցոյ Հոգեւոր եղբայրակցութիւն:

Սրբոց Վարդանանց եկեղեցոյ օծումը կատարուեցաւ հանդիսաւոր շուքով՝ հանդիսապետութեամբ Արամ Ա. կաթողիկոսին: Օրուան պատարագիչն էր Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Շահէ Էպս. Փանոսեանը: Վեհափառ հայրապետին կողքին արարողութեան իրենց մասնակցութիւնը բերին Քուէյթի եւ շրջակայից թեմի առաջնորդ Մասիս Ծ. վրդ. Զօպուլեան, Արաբական Միացեալ Էմիրութիւններու եւ Քաթարի կաթողիկոսական փոխանորդ Մեսրոպ Ծ. վրդ. Մարգիսեան, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան տեղեկատուական բաժանմունքի վարիչ Պետրոս վրդ. Մանուէլեան եւ գաւազանակիր Յովակիմ արք. Բանճարճեան:

Յայտնենք, որ արարողութեան նաեւ ներկայ էին Քուէյթի եւ շրջակայից քրիստոնէայ հոգեւոր պետեր, ինչպէս նաեւ Քուէյթի մէջ շարք մը երկիրներու դեսպաններ եւ Արաբական Միացեալ Էմիրութիւններէն, Մեուտական Արաբիայէն ու Պահրէյնէն ժամանած ազգայիններ եւ մեծ թիով հաւատացեալներ:

Հանդիսաւոր թափօրով Արամ Ա. կաթողիկոս մուտք գործեց եկեղեցի, ու վեհափառ Հայրապետին նախագահութեամբ սկիզբ առաւ օծման արարողութիւնը: Նախ վեհափառ հայրապետը օծեց եկեղեցոյ Ս. խորանը, համաձայն հայ եկեղեցոյ դարաւոր աւանդութեան: Ապա օծեց եկեղեցոյ մկրտարանը, որմէ ետք պատարագիչ սրբազան հայրը, առաջնորդ հայր սուրբին ուղեկցութեամբ, յաջորդաբար օծեց

Եկեղեցւոյ մայր դուռը եւ սիւները, որոնք նուիրուած էին առաքելներուն եւ մեր եկեղեցւոյ սուրբերուն: Ապա, նորած Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ «Անդաստան»-ի արարողութիւն:

Օծման արարողութեան աւարտին վեհափառ հայրապետը իր պատգամը ուղղեց ներկաներուն՝ ըսելով. «Անցնող տարիներուն Քուէթի հայութիւնը դժուար պայմաններու մէջ զԱստուած պաշտեց, դժուար պայմաններու մէջ իր գաղութային կեանքը կազմակերպեց, շնորհիւ մեր ժողովուրդի հաւաքական հաւատքին, սիրոյն, միասնականութեան ու վճռականութեան: Ահաւասիկ դուք այս եկեղեցին եւ Ազգային առաջնորդարանը կանգնեցիք, որպէսզի ձեր հոգեւոր ու ազգային կեանքը իր բոլոր երեսներով ու արտայայտութիւններով ըլլայ աւելի կազմակերպ, աւելի կենսունակ»:

Վեհափառ հայրապետը՝ խօսքը ուղղելով քուէթահայութեան, ըսաւ. «Եկեղեցին շէնքը չէ: Ինչ կ'արժէ գեղեցիկ շէնք մը կառուցել, երբ անիկա դատարկ է: Ձեր ներկայութեամբ այս եկեղեցին եկեղեցի պիտի դարձնէք բառին վաւերական հասկացողութեամբ, ձեր մասնակցութեամբ դուք եկեղեցի պիտի դառնաք: Քրիստոնէական եկեղեցին մեր ժողովուրդի կեանքին մէջ ազգային նկարագիր ստացած, դարձած է հայ եկեղեցի, եւ պատմութիւնը կը վկայէ, որ հայ եկեղեցին ճակատագրական դեր կատարած է մեր ժողովուրդի կեանքին մէջ: Մեր եկեղեցւոյ հօգուտին, մեր եկեղեցւոյ կոչումն ու առաքելութիւնը ծառայութիւն է Աստուծոյ եւ ժողովուրդին: Այսպէս կ'ըմբռնէ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, իր հայրապետով, միաբանութեամբ եւ ժողովական կառոյցներով: Արդ, կոչ կ'ուղղենք բոլոր թեմերուն, առաջնորդներուն, Ազգային իշխանութիւններուն նուիրումով ծառայելու մեր ժողովուրդի զաւակներուն: Ա՛յս է եկեղեցւոյ ճշմարիտ կոչումը: Այս եկեղեցին ձեր կեանքին մէջ պիտի դառնայ ծառայական ներկայութիւն: Պիտի բոլորուիք այս եկեղեցւոյ շուրջ, որպէսզի ձեր կեանքը ըլլայ աւելի կազմակերպ ու կենսունակ»:

Ահաւասիկ հրաշքի համագործը իրագործում մըն է, որ տեղի ունեցաւ: Ձեր հոգեւոր ապրումներով ու հաւատքի զօրութեամբ պիտի պայծառացնէք այս եկեղեցին, որպէսզի եկեղեցիով դուք պայծառանաք»:

Աւարտին վեհափառ հայրապետը ողջունեց քրիստոնէայ համայնքներու հոգեւոր պետերու, դիւանագետներու ու դեսպաններու ներկայութիւնը: Ապա յանուն Քուէթի հայութեան շնորհակալութիւն յայտնեց Քուէթի իշխանին՝ ըսելով. «Իմ հոգեկան ուրախութիւնս կ'ուզեմ յայտնել, որ անգամ մը եւս կը գտնուիմ Քուէթի այս օրհնեալ երկրին մէջ, ուր բոլոր քուէթցիները, առանց կրօնական ու համայնքային խտրութեան, կ'ապրին խաղաղութեան մէջ, փոխադարձ սիրոյ ու յարգանքի մթնոլորտի մէջ: Նոյն այս մթնոլորտին մէջ կ'ապրին հայ եկեղեցւոյ զաւակները: Անոնք իրենց աշխատանքով ու հաւատարմութեամբ գործօն մասնակցութիւն կը շարունակեն բերել Քուէթի զարգացման ու ծաղկման: Այս առիթով ես իմ շնորհակալութիւնս կը յայտնեմ Քուէթի իշխան նորին վսեմութիւն շէյխ Սապահ Ահմետ Շապեր Սապահին՝ հայ համայնքին նկատմամբ իր ցուցաբերած հոգածութեան եւ ընծայած կարելիութիւններուն համար»:

Կարելի է անվարան բարձրադաղակել, որ «Ժողովուրդիս հետ, եկեղեցւոյս համար» նշանաբանով, Քուէթի մէջ եկեղեցաշինութեան սրբազան գործը յառաջ տարուեցաւ եւ հասաւ իր պատուաբեր վախճանին՝ հիմնական յենարան ունենալով քուէթահայութեան անընկճելի կամքն ու միասնական ոգին, որոնց մէկտեղումով այսօր բոլորիս երազանքը կեանքի կոչուեցաւ, եւ յիսնամեակէ մը աւելի կեանք ունեցող քուէթահայ համայնքը արդէն տէրն ու տիրականն է սեփական հայկական եկեղեցւոյ եւ առաջնորդարանի:



Յայտնենք, որ նոյն օրը առաւօտուն, Արամ Ա. վեհափառ հայրապետին նախագահութեամբ Քուէթի եւ շրջակայից թեմի առաջնորդ Սասիս Օ. վրդ. Զօպույեանի ու Ազգային իշխանութեան ներկայացուցիչներու ներկայութեամբ պաշտօնական բացումը կատարուեցաւ Ազգային առաջնորդարանին:

ՄԻՐՈՅ ՍԵՂԱՆ՝ Ի ՊԱՏԻԻ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Շաբաթ, 20 Մայիս 2017-ի երեկոյեան, քուէյթահայութիւնը «Շիրաթոն» Պանդոկի «Տայմոնտ» ճաշարահէն ներս, սիրոյ սեղանի մը շուրջ համախմբուեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին շուրջ:

Երեկոն սկիզբ առաւ Վեհափառ Հայրապետին աղօթքով եւ Քուէյթի ու Հայաստանի Հանրապետութեանց զոյգ քայլերգներով, որմէ ետք օրուան հանդիսավար՝ Քուէյթի Հայ Դատի Յանձնախումբի Ատենապետ՝ Տոքթ. Ժանօ Պէպէճեան ողջոյնի խօսք արտասանեց ըսելով. «Վեհափառ Տէ՛ր, Ձեր նկատողութիւնը ճիշդ էր, որ մեր համայնքի զաւակներու դէմքերուն վրայ եւ այքերուն մէջ կերելին երջանկութեան ու անյագուրդ ուրախութեան շողեր: Երջանկութիւն մը, որ յատուկ է սօնական եւ հարսանեկան օրերու: Բոլորին մօտ կը նշմարուէր հպարտախառն ինքնավստահութիւն մը եւ յաղթանակի ու գոհունակութեան խառն զգացողութիւն մը:



- «Այդ երջանկութեան գաղտնիքը պէտք է փնտռել հետեւեալ կէտերուն մէջ.-
- ա) Տասնեակ տարիներ կը կարծուէր որ սեփական եկեղեցի կառուցելը լոկ երազային ձգտում մըն էր, իսկ այսօր անիկա շօշափելի իրականութիւն դարձած է իր ամբողջ շքեղութեամբ:
- բ) Մեր ժողովուրդը ուրախ է, նաեւ այն պատճառով, որ մեր հաւատքի հզօրացման երաշխիքը հանդիսացող այս նորաշէն սրբավայրը կառուցուած է հայ մտքի ծրագրումով, հայ ժողովուրդի լումայով, հայու բազուկով, հայ ճարտարապետի ստեղծագործութեամբ, հայկական ընկերութիւններու ինքնաբուխ եւ անվարան օժանդակութեամբ:
- գ) Նաեւ ուրախ ենք, որ մեր եկեղեցին արժանացաւ Ձերդ Սրբութեան սուրբ օծումին:
- դ) Մեր վերջին եւ կարեւորագոյն ուրախութեան պատճառը կը կայանայ այն հանգամանքին մէջ, որ 2011-ին Կիլիկիոյ Աթոռի Գահակալին մեր ուսերուն դրած պարտքը փակած ենք լիիրաւ կերպով»:

Ապա գործադրուեցաւ իւրայատուկ գեղարուեստական յայտագիր, բաղկացած հետեւեալներէն.-

- ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԱՏՈՒՑՈՒՄ՝ Խաչատուր Աւետիսեանի «Տաւիղ»ը, Արամ Խաչատուրեանի «Մուրերու Պար»ը եւ Կոմիտասի «Չինար Ես» երաժշտական հատուածները, Կատարողութեամբ՝ Հայկուհի Բագեանի (Դաշնամուր) եւ Թամար Թէմամեանի (Զուրթակ):
- Մեներգ՝ «Բարի Հայրիկ» Կատարողութեամբ՝ Ռոստոմ Սարգիսեանի:
- Երաժշտական մատուցում՝ Ալեքսանտր Յարութիւնեանի եւ Առնօ Պապաճանեանի «Armenian Rhapsody», Կատարողութեամբ՝ Փաթիլ Զաքարեանի, Համադրում՝ Փաթիլ Զաքարեանի
- «Նոր Եկեղեցին Պատկերներով»: Սոյն յայտագրով ներկաները հետեւեցան նորակառոյց եկեղեցոյ շինարարական հանգրուաններուն, ուր երեւան էլան եկեղեցոյ ճարտարապետներ՝ Գրգիոր Պետիրեանի, Պետրոս Պետիրեանի եւ ճարտարագէտ՝ Պարգէ Տէմիրճեանի ճարտարագիտական եւ արհեստագիտական հմտութիւնները, որոնց շնորհիւ այսօր Քուէյթահայութիւնը տիրացաւ գեղատեսիլ եկեղեցիի մը:

- Մեներգ՝ Կոմիտասի «Կռունկ»ը, Կատարողութեամբ՝ Ատոմ Քեհեայեանի Նուագակցութեամբ՝ Հայկուհի Բազեանի
- Ասմունք՝ Ժագ Յակոբեանէն եւ Վահան Թէքէեանէն համադրում, Կատարողութեամբ՝ Կիլտա Պերպէրեանի, Մայտա Թադոյեանի եւ Հուրի Փիլաւճեանի:

Ապա բեմ հրաւիրուեցաւ Քուէյթի եւ Շրջակայից Թեմի Երեսփոխանական Ժողովի Ատենապետ՝ Յարութ Պետիրեանը, որ համայն քուէյթահայութեան անունով նախ բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին, ապա իր խօսքը ուղղելով Նորին Սրբութեան ըսաւ. «Օրհնաբեր օրեր ու մեծ պատիւ է մեզի համար Ձեր ներկայութիւնը մեր գաղութէն ներս: Ձերդ Սրբութիւնը Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը դրաւ հաւատքի առաքելութեան եւ ազգային ծառայութեան բեղմնաւոր ճանապարհներուն վրայ՝ հաւատքով, ամբողջական նուիրումով, գիտակից յանձնառութեամբ ու վառ տեսիլքով: Դուք ամբողջական գիտակցութեամբ, գերմարդկային ճիգերով եւ պատուաբեր նուաճումներով հարստացուցիք մեր եկեղեցական ու ազգային կեանքը: Անթիլիասը ճառագայթեց թեմերէն ներս, եղաւ հոգեկան, մտային ու ֆիզիքական ներկայութիւն»:

Անդրադառնալով միջազգային հարթակներու վրայ Վեհափառ Հայրապետի վարած լայնածաւալ գործունէութեան ըսաւ. «Դուք յարաբերութիւններու հսկայ շրջագիծ մը ստեղծեցիք եկեղեցական, քաղաքական շրջանակներու ու ղեկավարներու հետ: Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ախոյեանը դարձուցիք եկեղեցիներու միութեան շարժումին եւ երկար տարիներ ղեկավարեցիք այդ շարժումը: Ձեր բոլոր ճիգերը ի գործ դրիք՝ Հայաստանի Հանրապետութեան հզօրացման եւ Արցախի հարցին համար: Ախոյեանը եղաք Հայ Դատի համար մղուած պայքարին: Քուէյթահայութիւնը այսօր կու գայ վերահաստատելու եւ ամրագրելու իր պատկանելիութիւնն ու ամբողջական հաւատարմութիւնը՝ Կիլիկիոյ Սուրբ Աթոռին: Այս պատկանելութիւնը լոկ վարչական կապ մը չէ մեզի համար, այլ գիտակցութիւն է՝ պատմութեան եւ ազգային անժամանցելի արժէքներուն, Հայ Դատ եւ, Արեւմտահայաստան է եւ Կիլիկիա է: Մենք բոլորս հպարտ ենք Ձեզմով եւ կը մաղթենք Ձեզի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յարատեւ յաջողութիւններ եւ նուաճումներ: Բոլորս հաւատքի առաքելութեան եւ ծառայութեան ծառաներն ենք՝ Ձեր գլխաւորութեամբ»:

Եզրափակելով իր խօսքը Պրն. Պետիրեան ըսաւ. «Այսօր Քուէյթի Երեսփոխանական Ժողովի եւ մեր գաղութի բոլոր գործող մարմիններու անունով կը ներկայանանք Ձերդ Սրբութեան, Ձեզի աւետելու եւ ինքնավստահօրէն յայտարարելու, թէ մեր հաւաքական ուխտը կատարած ենք եւ այսօր եկեղեցւոյ սեփական շէնքը յաղթական ներկայութիւն է Քուէյթի գաղութին համար»:

Յիշատակութեան արժանի է, որ նշեալ երեկոյին Քուէյթի մօտ Լիբանանի Դեսպան՝ Մահեր Խէյր իր ողջոյնի խօսքը փոխանցեց Վեհափառ Հայրապետին, այս աննախընթաց իրադարձութեան համար եւ շնորհաւորեց քուէյթահայութիւնը ի տես այս մեծ նուաճումին:

Քուէյթի եւ Շրջակայից Թեմի Առաջնորդ՝ Գերայ. Տ. Մասիս Ծ. Վրդ. Զօպույեան իր սրտի խօսքը փոխանցեց՝ ըսելով. «Վեհափառ Տէր, Ձեր մեկնումէն ետք մեզի պարգեւած այս յիշարժան օրերը, պահերն ու ապրումները հպարտութեամբ, հրճուանքով եւ ուրախութեամբ լեցուցին մեր սիրտերը: Ուստի, կը խոստանանք եւ կուխտենք, որ նոյն ուրախութիւնը, ցնծութիւնն ու ջերմեռանդութիւնը պիտի պահենք մեր սիրտերուն եւ հոգիներուն մէջ, Ձեր պատգամները, ցուցումները եւ խրատները միշտ կենդանի պահելով մեր յիշողութեան եւ առօրեային մէջ»:

Ապա իր խօսքը ուղղելով Վեհափառ Հայրապետին՝ ըսաւ. «Որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գերագոյն իշխանութիւն մեզի համար Ձեր ներկայութիւնը մեր մէջ մեծագոյն հպարտանք է: Եւ ինչպէս դուք Վեհափառ Տէր 2017 տարին «Վերանորոգման Տարի» հռչակեցիք,

Ձեր ներկայությունը թե՛ օրհնութեան եւ թե՛ վերանորոգութեան առիթ մը պէտք է հանդիսանայ մեզմէ իւրաքանչիւրիս, թե՛ որպէս հոգեւորական եւ թե՛ որպէս աշխարհական Ձեր սուրբ քայլերուն հետեւելու եւ մեր կեանքին մէջ Ձեզ ընդունելու որպէս տիպար դէկավար, առաջնորդ եւ Հայրապետ, որ կրցաւ հայ ժողովուրդը առաջնորդել դէպի խաղաղ նաւահանգիստ»:

Գերապատիւ Հայր Սուրբը յատուկ ուշադրութիւն դարձուց Քուէթի նորակառոյց եկեղեցւոյ օժման եւ Ազգային Առաջնորդարանի բացման առիթով ազգային իշխանութեան կողքին կանգնած ազգային բարերարներուն եւ նուիրատուներուն՝ ըսելով. «Անոնք ընդհանրական ցարը բաժնեցին, մտահոգութիւնը կիսեցին, յոյս ներշնչեցին եւ իրենց նիւթական ներդրումներով՝ յաջողութեամբ պսակուեցաւ մեզի վստահուած գործը»:


Ապա հրաւիրեց Վեհափառ Հայրապետը շքանշաններով պարգեւատրելու հետեւեալ անձերը.-

Անուշաւան Նազարեան «ԻՇԽԱՆ»ի շքանշան
Ֆիլիփ Փաթաթանեան «ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏ»ի շքանշան
Գրիգոր Սուազճեան «ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏ»ի շքանշան
Տոքթ. Ժանօ Պէպէճեան «ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏ»ի շքանշան
Յակոբ Պետիրեան «ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏ»ի շքանշան
Մունիր Դարբինեան «ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏ»ի շքանշան
Կոստանդին Մումճեան «ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏ»ի շքանշան
Եղիա Կարպուշեան «Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ»ի շքանշան

Որմէ ետք Վեհափառ Հայրապետը Յուշանուէրով մը պատուեց նաեւ Քուէթի եւ Շրջակայից Թեմի Առաջնորդ՝ Գերպ. Տ. Մասիս Ծ. Վրդ. Զօպույեանը:

Ապա Վեհափառ Հայրապետը իր խրախուսիչ պատգամը փոխանցեց ներկաներուն ըսելով. «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան խօսքը իր գործն է, եւ իր գործը էապէս ծառայութիւն է: Արդ, իմ փափաքս է, որ այս գաղութին մէջ, ծառայողներուն, գործողներուն, բարերաներուն եւ նուիրատուներուն թիւը բազմանայ, որպէսզի իրենցմով մենք հզօրանանք»:

Կարեւորելով ժողովուրդի մը երազանք ունենալու անհրաժեշտութիւնը Հայրապետը ըսաւ. «Վա՛յ այն ժողովուրդին, որ երազ չունի: Ժողովուրդներ իրենց ազգային գաղափարախօսութիւնը կը վերածեն ամենօրեայ տազնապի: Այսպէս է նաեւ մեր ժողովուրդը Սփիւռքի տխուր պայմաններուն մէջ: Հարիւր տարիէ ի վեր ցեղասպանութենէն ետք բաժան բաժան եղանք, գաղթական դարձանք, սակայն մնացինք հայ, որովհետեւ ամէն օր հայ ըլլալը մեզի համար պիտակ չէր, տազնապ էր: Որոշեցինք հայ մնալ եւ մնացինք: Հետեւաբար, սիրելի՛ Քուէթի Հայութիւն, եկեղեցւոյ եւ Ազգ. Առաջնորդարանի շինութիւնը վստահ եմ որ ձեզ պիտի համախմբէ այս կեդրոնական կառոյցներուն շուրջ»:



Որպէս եզրակացութիւն Վեհափառ Հայրապետը հայութեան համախումբ ներկայութիւնը կարեւորելով՝ ըսաւ. «Հայութիւնը Հայ Դատ է, համախումբ ներկայութիւն է եւ մասակցութիւն է մեր հաւաքական կեանքին, եւ անկէ հեռու ես չեմ կրնար հայութիւն երեւակայել: Հայութիւնը,

ինքնակեղրոն, անձնակեղրոն գոյություն մը չէ, այլ հաւաքական ներկայութիւն է, հաւաքական կեանք է, հաւաքական պայքար է մանաւանդ սփիւռքի մէջ:

Ահաւասիկ կառուցեցիք ձեր հաւատքի տունը: Պատի՛ւ ձեզի: Նոյն գիտակցութեամբ վստահ եմ, որ պիտի աւելի ծաղկեցնէք ձեր համայնքը, բառին ամբողջական իմաստով: Ապրի՛ք, հազար ապրի՛ք Քուէյթի հայութիւն»:

Նորին Սրբութեան խօսքէն ետք, առաջնորդ Հայր Սուրբը բեմ հրաւիրեց Քուէյթի եւ Շրջակայից Թեմի Երեսփոխանական ժողովի Դիւանը, որ Վեհափառ հայրապետին փոխանցեց գեղեցիկ յուշանուէր՝ խաչ մը, առ ի երախտագիտութիւն անոր բոլորանուէր ծառայութեան եւ Քուէյթահայութեան հանդէպ ցուցաբերած անվերապահ աջակցութեան ու քաջալերանքին:

«Պահպանիչ» աղօթքով իր աւարտին հասաւ Վեհափառ Հայրապետի Հովուապետական այցելութիւնը Ի Քուէյթ, Քուէյթահայութեան յիշողութեան մէջ անջնջելի դրոշմ մը ուրուագծելով, որ գոհունակ սիրտով բաժնուեցաւ սրահէն իր հետ տանելով «Քուէյթահայութեան Պատմական Մխրագործութիւնը» վերնագրեալ գրքոյկը, որ ինքնատիպ եւ բծախնդիր աշխատանք մըն էր, անմահացնելու քուէյթահայութեան պատմական երթը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանիին տակ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՔՈՒԷՅԹԻ ՄԷՋ

Քուէյթի Հայոց Թեմին իր հովուապետական այցելութեան ծիրէն ներս յատուկ կարեւորութիւն կը ներկայացնէր Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ տեղի ունեցած միջ-եկեղեցական արարողութիւնը:

Արդարեւ, միջ-եկեղեցական արարողութենէն առաջ Վեհափառ Հայրապետին բարի գալուստի եկած էին Քուէյթի բոլոր քրիստոնէայ համայնքներու հոգեւոր պետերը՝ գլխաւորութեամբ Քուէյթի, Պահրէյնի, Արաբական Միացեալ Էմիրութեանց ու Քաթարի պապական նուիրակ Ֆրանչիսկոս Սօնթեսիլօ Բատիլլա Արքեպիսկոպոսին: Հանդիպման ընթացքին Նորին Սրբութիւնը լայնօրէն անդրադարձաւ միջ-եկեղեցական շարժումին ու անոր դիմագրաւած դժուարութիւններուն: Վեհափառ Հայրապետը շեշտեց միջ-եկեղեցական գործակցութեան առընթեր քրիստոնէայ-իսլամ գոյակցութեան ու գործակցութեան առաջնահերթ կարեւորութիւն տալու հրամայականը:

Հրաւերով յոյն ուղղափառ համայնքի մետրապոլիտ՝ Ղաթթաս Հազիմին միջ-եկեղեցական արարողութիւն մը տեղի ունեցաւ յիշեալ եկեղեցոյ մէջ՝ ներկայութեամբ բոլոր հոգեւոր պետերու եւ մեծ թիով հաւատացեալներու: Արարողութեան ընթացքին պապական նուիրակը խօսք առնելով՝ ողջունեց Հայրապետին ներկայութիւնը Քուէյթի մէջ եւ իր ուրախութիւնը յայտնեց պարզուած միասնական մթնոլորտին համար: Արարողութեան աւարտին յանուն Անտիոքի յոյն ուղղափառ պատրիարքին մետրոպոլիտը ողջունեց Վեհափառ Հայրապետին այցելութիւնը Քուէյթ ու յատկապէս իր եկեղեցին. խօսեցաւ Նորին Սրբութեան միջ-եկեղեցական ու քրիստոնէայ-իսլամ բնագաւառներէն ներս ունեցած լայն փորձառութեան մասին եւ ապա յուշանուէր մը յանձնեց Նորին Սրբութեան:

Իր փակման պատգամին մեջ Արամ Ա. Կաթողիկոս իր խոր գոհունակությունը յայտնեց, որ Քուէթէն ներս քրիստոնեայ համայնքները կը վայելեն լայն ազատություն, եւ քրիստոնեայ-իսլամ համակեցութեան գեղեցիկ մթնոլորտ մը պարգուած է երկրէն ներս շնորհիւ Շէյխ Սապահ Ալ Ահմէտ Ալ Ճապեր Ալ Սապահ Էմիրին: Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Հակառակ պատմութեան պարտադրած բաժանումներուն, եկեղեցին իր էական միութիւնը պահած է: Մենք Քրիստոսով մէկ եկեղեցի ենք, եւ անսալով Քրիստոսի պատուերին պէտք է աղօթենք, խորհրդակցինք ու գործակցինք, որպէսզի եկեղեցւոյ ամբողջական միութիւնը արտայայտենք»: Վեհափառ Հայրապետը նաեւ անդրադարձաւ խաղաղութեան համար միասին աշխատելու հրամայականին: Ան յիշեցուց, որ իսկական ու մնայուն խաղաղութիւնը կը հիմնուի արդարութեան վրայ: Ա՛յս է Աւետարանին պատգամը, եւ հաւատարիմ աւետարանական ճշմարտութեան ու պատգամին, մենք կոչուած ենք աշխատելու արդարութեան ու խաղաղութեան ամբողջական հաստատման համար, եզրակացուց Հայրապետը:



Արարողութեան իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Քուէթի եւ Շրջակայից Թեմի Առաջնորդ՝ Գերպ. Տ. Մասիս Ծ. Վրդ. Զօպույեան, Արաբական Միացեալ Էմիրութեանց եւ Քաթարի Թեմի



Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերպ. Տ. Մեսրոպ Ծ. Վրդ. Սարգիսեան եւ Կաթողիկոսարանիս Տեղեկատուական Բաժանմունքի Վարիչ՝ Հոգ2. Տ. Պետրոս Վրդ. Մանուէլեան:

Եկեղեցական արարողութենէն ետք, բոլոր համայնքերէ հաւաքուած հաւատացեալները աջահամբոյրով իրենց բարեմաղթութիւնները ներկայացուցին Նորին Սրբութեան:

ՀԱՅԿԱԿԱՆ

Արամ Արք. Աթեշեան Հրաժարած Է Պոլսոյ Հայոց Պատրիարքական Փոխանորդի Պաշտօնէն

Պոլսոյ «Ակօս» թերթը կը հաղորդէ, թէ Պոլսոյ հայոց պատրիարքական փոխանորդ Արամ արք. Աթեշեան հրաժարական տուած է պատրիարքական փոխանորդի իր պաշտօնէն:

Հրաժարականի մասին Աթեշեան յայտարարած է պատրիարքարանին մէջ հրաւիրած հանդիպումի մը ընթացքին, որուն ներկայ եղած են կարգ մը հիմնադրամներու ղեկավարներ եւ բարերարներ:

Կ'ակնկալուի, որ շուտով այս մասին պատրիարքարանը հանդէս գայ յատուկ յայտարարութեամբ:

Նախագահ Սարգսեան Հանդիպում Ունեցած Է Հայաստանի Զինուած Ուժերու Ղեկավար Կազմին Հետ

Հայաստանի Հանրապետութեան նախագահի պաշտօնական կայքը կը հաղորդէ, թէ հանրապետութեան նախագահ, Հայաստանի զինուած ուժերու գերագոյն գլխաւոր հրամանատար Սերժ Սարգսեան երկէ Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան վարչական համալիրին մէջ հանդիպում ունեցած է զինուած ուժերու ղեկավար կազմին հետ:

Վիզէն Սարգսեան Ընդունած Է Հայաստանի Մէջ Չինաստանի Արտակարգ Եւ Լիազօր Դեսպանը

24 մայիսին Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարի պաշտօնակատար Վիզէն Սարգսեան ընդունած է Հայաստանի Հանրապետութեան մէջ Չինաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Թիան Էրլունը:

Հանդիպումին ընթացքին դեսպան Թիան Էրլուն ներկայացուցած է Հայաստանի մէջ Չինաստանի դեսպանութեան նոր նշանակուած զինուորական եւ ռազմաօդային կցորդ, աւագ գնդապետ Չժան Ֆենխուան: Վիզէն Սարգսեան շնորհաւորած է զինուորական կցորդը՝ պաշտօնի ստանձնման առիթով, մաղթած յաջողութիւն Հայաստանի մէջ իր հետագայ ծառայութիւնը իրականացնելու ընթացքին:

Զրոյցի ընթացքին կողմերը բարձր գնահատած են հայ-չինական յարաբերութիւններու ներկայիս մակարդակը, այդ կարգին նաեւ՝ պաշտպանութեան մարզին մէջ, քննարկած են փոխադարձ գործակցութեան հետագայ ընդլայնման եւ զարգացման ուղիները:

Միացեալ Նահանգներ Կը Կրճատեն Հայաստանի Ֆինանսաւորումը

«Մասիս փոսթ»-ը, վկայակոչելով Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը, կը տեղեկացնէ, թէ Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի վարչակազմը ներկայացուցած է 2018-ի

Ֆինանսական տարուան համար իր առաջարկները, որոնք կը նախատեսեն նուազեցնել Հայաստանին տրուող ֆինանսական աջակցութիւնը:


Հայաստանին կ'առաջարկուի միայն 6,8 միլիոն տոլար տրամադրել: 2017-ին տրամադրուած օգնութիւնը կազմած էր 20,4 միլիոն տոլար:

Այսպիսով, օգնութեան ծաւալը կ'առաջարկուի նուազեցնել 67 առ հարիւրով: Միւս կողմէ, Վրաստանին եւ Ուրբանիոյ տրամադրուող օգնութիւնը կը նուազի համապատասխանաբար 57 եւ 70 առ հարիւրով, իսկ Ազրպէյճանի օգնութիւնը՝ 90 առ հարիւրով: Բացի ասկէ, պիտձեռվ վերահաստատուած է 907-րդ ուղղումը, որ կ'արգիլէ Ազրպէյճանին օժանդակութիւն տրամադրել, քանի դեռ չէ վերացած Հայաստանի շրջափակումը:

Եւրոպական եւ եւրասիական երկիրներուն օգնութիւնը ընդհանուր առմամբ պիտի կրձատուի 60 առ հարիւրով:

Քոնկրետական Փօ Կը Դատապարտէ Ուաշինկթընի Մէջ Ծուցարարներու Դէմ Էրտողանի Թիկնապահներուն Յարձակումը

«Արմինիըն Ուիքլի» կը հաղորդէ, որ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տան մէջ իր արտասանած խօսքին ընթացքին քոնկրետական Թետ Փօ դատապարտած է Ուաշինկթընի մէջ 16 մայիսին Թուրքիոյ նախագահ Ռեձեփ Թայիփ Էրտողանի թիկնապահներուն յարձակումը խաղաղ ցուցարարներու դէմ:



«Թուրքիոյ նախագահ Էրտողան մարդու իրաւունքներու կոպիտ ոտնահարման իր գործելաձըր բերած է Ուաշինկթըն: Տարիներ շարունակ Էրտողան յարձակումներ գործած է Թուրքիոյ ժողովրդավարական կառոյցներուն դէմ, ոչնչացուցած է օրէնքի գերակայութիւնը եւ ոտնահարած Թուրքիոյ քաղաքացիական ազատութիւնները», բացատրած է Փօ՝ աւելցնելով, որ Էրտողան կը դառնայ «թուրք բռնապետ»:

Ան նշած է, որ 16 մայիսին Ուաշինկթընի մէջ Թուրքիոյ դեսպանատան առջեւ խումբ մը «խուլիկաններ դաժանաբար յարձակած են» ցուցարարներու դէմ:

«Այս կեսթափոյական ոճի թիկնապահները կը խոշտանգեն խաղաղ ցուցարարները, նոյնիսկ ոտքով կը հարուածեն գետին պառկած կնոջ: Այս վարմունքը անընդունելի է: Էրտողան թուրք բռնապետի կը վերածուի: Բռնապետի յատկանիշներէն մէկը ընդդիմութիւնը դաժանօրէն ոչնչացնելն է», ըսած է ան:

Քոնկրետականը նշած է, որ Էրտողան ցոյց կու տայ, որ ան չ'ընդունիր ազատ խօսքի եւ խաղաղ հաւաքներու ժողովրդավարական սկզբունքները: «Սակայն մենք օտարերկրեայ բռնակալին պիտի չարտօնենք անհետեւանք խախտել այս սրբազան իրաւունքները ամերիկեան հողին վրայ», աւելցուցած է Փօ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Քաթարի Իշխանին Վերագրուած Յայտարարութեան Շուրջ Փոխադարձ Ամբաստանութիւններու Այլիք

Քաթարական ՔԱՆԱ պետական լրատու գործակալութեան կողմէ Քաթարի իշխան Թամիմ պրն Համատ Ալ Թանիի մէկ յայտարարութեան հրապարակումէն ետք փոխադարձ ամբաստանութիւններու այլիք մը բարձրացաւ մէկ կողմէ սէուտական եւ Էմիրաթական լրատուամիջոցներու, իսկ միւս կողմէ քաթարական լրատուամիջոցներու միջեւ:

Հարցը սկիզբ առաւ, երբ քաթարական լրատու գործակալութիւնը հրապարակեց Քաթարի իշխանին վերագրուած յայտարարութիւն մը, որուն բովանդակութիւնը հրահրեց մեծ բանավեճ մը, որ շուտով մագլցում արձանագրեց: Քաթարցի պաշտօնատարներ հերքեցին, թէ այդ յայտարարութիւնը իսկապէս կը պատկանի իշխանին՝ նշելով, որ կայքահէններ ներթափանցած էին քաթարական լրատու գործակալութեան կայք, որ իրապէս ալ որոշ ատեն դադրած էր գործելէ: Գործակալութիւնը «Թուիթըր»-ի իր էջին վրայ գրած էր, որ առնչակից կողմերը այդ հարցին շուրջ հետաքննութիւն պիտի կատարեն եւ պատժեն արարքին պատասխանատուները:

Արաբական Միացեալ Էմիրութիւնները անմիջապէս արգիլեցին քաթարական «Ժազիրա» արբանեակային պատկերասփիւռի կայանին սփռումը, իսկ սէուտական լրատուամիջոցներ սկսան բռն կերպով քննադատել Քաթարի իշխանին վերագրուած յայտարարութիւնը:

Ապա, քաթարական լրատու գործակալութիւնը «Թուիթըր»-ի իր էջին վրայ նոր գրառում մը հրապարակելով յայտարարեց, որ Քաթարի արտաքին գործոց նախարարը հրամայած է Մէուտական Արաբիոյ, Արաբական Միացեալ Էմիրութիւններու, Եգիպտոսի, Քուէյթի եւ Պահրէյնի մէջ իր դեսպանները տուն կանչել եւ Տոհայի մէջ նշեալ երկիրներու դեսպաններուն 24 ժամուան պայմանաժամ ճշդած է Քաթարէն հեռանալու: Մէուտական լրատուամիջոցներ անմիջապէս հակադրեցին: Մակայն քաթարական լրատուամիջոցները հերքեցին այդ լուրը՝ նշելով, որ քաթարական լրատու գործակալութեան «Թուիթըր»-ի էջը եւս ներթափանցումի ենթարկուած է: Հետագային այդ յայտարարութիւնը ջնջուեցաւ եւ անոր տեղ գետեղուեցաւ այլ յայտարարութիւն մը, թէ Քաթարի արտաքին գործոց նախարարը այդպիսի բան չէ ըսած եւ անոր խօսքերը «պարունակէն դուրս բերուած են»:

Քաթարի իշխանին վերագրուած յայտարարութեան համաձայն, ան նշած է. «Իրանը շրջանային ու իսլամական կշիռ մը ունի, որ կարելի չէ անտեսել, եւ անոր դէմ մագլցողական քայլերու դիմելը իմաստուն չէ»: Ան անելցուցած է, որ Իրան «շրջանի կայունութիւնը երաշխաւորող մեծ տերութիւն մըն է»՝ նշելով. «Քաթար Իրանի հետ համագործակցութեան նախանձախնդիր է մերձակայ երկիրներու կայունութեան համար»:

Ան յայտնած է, որ իր երկիրը յաջողած է նոյն ատեն Միացեալ Նահանգներու եւ Իրանի հետ տոկուն յարաբերութիւններ հիմնել:

«Ոչ ոք իրաւունք ունի մեզ ահաբեկչական որակելու, որովհետեւ Իսլամ եղբայրները կը նկատու ահաբեկչական կամ կը մերժէ Համասի եւ Հրզպալլայի դիմադրութեան դերը», ըսած է ան՝ Եգիպտոսին, Արաբական Միացեալ Էմիրութեանց եւ Պահրէյնին կոչ ուղղելով վերատեսութեան ենթարկելու Քաթարի դէմ իրենց կեցուածքները՝ անելցնելով, որ Քաթար չի միջամտեր որեւէ պետութեան ներքին հարցերուն, որքան ալ այդ պետութիւնը իր ժողովուրդը գրկէ իր ազատութենէն ու իրաւունքներէն:

Ան յայտնած է, թե իր երկիրը «ահաբեկչության առնչելու, կայունության իրագործման անոր ջանքերը աղաւաղելու նպատակով անիրաւ արշաւները զուգադիպած են Միացեալ Նահանգներու նախագահին շրջան այցելութեան»:

Քաթարի իշխանին վերագրուած յայտարարութեան մէջ նաեւ նշուած է, որ «Իսրայէլի հետ մեր յարաբերութիւնները լաւ են»՝ նշելով. «Համաս շարժումը Պաղեստինի օրինական ներկայացուցիչն է»:

ՏԱՀԵՇ Հարաւային Ֆիլիպինի Մէջ Քաղաք Մը Գրաւելով Երկրին Մէջ Կը Ցայտարարէ Իր Առաջին Էմիրութեան Ստեղծումը

ՏԱՀԵՇ ֆիլիպինեան բանակին հետ բուռն բախումներէ ետք գրաւեց Ֆիլիպեան կղզիներու հարաւարեւմտեան Մարաուի քաղաքը եւ յայտարարեց երկրին մէջ իր առաջին Էմիրութեան ստեղծումը:



ՏԱՀԵՇ քաղաքը գրաւեց հոն գտնուող իր բջիջներուն անակնկալ յարձակումէն ետք, որմէ ետք այլ խմբաւորումներ քաղաքին մերձակայ շրջաններէն մուտք գործեցին քաղաք եւ գրաւեցին զինուորական կեդրոններն ու այդտեղ գտնուող մեքենաները:

ՏԱՀԵՇ-ի զինեալները նաեւ ներխուժեցին քաղաքի բանտը եւ բանտարկեալները ազատ արձակելէ ետք հրկիզեցին զայն:

Փորձագէտներու կարծիքով՝ Իրաքի մէջ անոր գոյութեան վերջ տրուելէն եւ Սուրիոյ մէջ անոր գոյութեան վերջ տալու պատրաստութիւններէն ետք, ահաբեկչական խմբաւորումը կրնայ դիմել Ծայրագոյն Արեւելքի կամ Հիւսիսային Ափրիկէի մէջ իր նոր պետութեան ստեղծման:

Նշենք, որ ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը հաղորդած էր, թէ Ֆիլիպեան կղզիներու նախագահ Ռոտրիկէ Տութերթէ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի հետ հանդիպումին ընթացքին յայտնած է. «Մենք որոշ պատուէրներ կատարած ենք Միացեալ Նահանգներէն, սակայն հիմա կացութիւնը այնքան ալ հանգիստ չէ: ՏԱՀԵՇ-ի դէմ կռուելու համար մեզի պէտք է ժամանակակից զէնք: Ես եկած եմ ձեր օգնութիւնը խնդրելու»:

Ֆրանչիսկոս Պապը Եւ Թրամփը Քննարկած Են Միջին Արեւելքի Տագնապին Խաղաղ Լուծման Ուղիները

Ֆրանչիսկոս պապը եւ Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփ քննարկած են միջազգային տագնապներու, մասնաւորաբար, միջինարեւելեան շրջանի տագնապի խաղաղ լուծման ուղիները: Այդ մասին, ինչպէս կը տեղեկացնէ «Արմէնփրես», 24 մայիսին յայտնած է Վատիկանի մամուլ ծառայութիւնը՝ ամփոփելով կաթողիկէ եկեղեցւոյ հովուապետին եւ Միացեալ Նահանգներու նախագահին միջեւ կայացած հանդիպման արդիւնքները:

«Զրոյցի ընթացքին կարծիքներ փոխանակուած են միջազգային օրակարգի շարք մը նիւթերու եւ քաղաքական հոլովոյթի ու միջկրօնական երկխօսութեան միջոցով խաղաղութեան հաստատման ուղիներու շուրջ: Առանձնակի ուշադրութիւն դարձուած է Միջին Արեւելքի եւ քրիստոնէական համայնքներու պաշտպանութեան նիւթին», նշուած է հաղորդագրութեան մէջ:



Զրոյցի ընթացքին կողմերը նշած են Վատիկանի եւ Միացեալ Նահանգներու միջեւ յարաբերութիւններու բարձր մակարդակը, ինչպէս նաեւ հաւատքի եւ խղճմտանքի ազատութեան պաշտպանութեան ընդհանուր ձգտումը:

«Վատիկանը եւ Միացեալ Նահանգները յոյս ունին ամրապնդել համագործակցութիւնը այնպիսի մարզերու մէջ, ինչպիսիք են առողջապահութիւնը, կրթութիւնը եւ գաղթականներուն ցուցաբերուող

օգնութիւնը», կը նշուի փաստաթուղթին մէջ:

Թրամփի հետ պապի դէմ առ դէմ զրոյցը տեսած է կէս ժամ: Բացի ատկէ, Միացեալ Նահանգներու նախագահը բանակցութիւններ վարած է Վատիկանի պետական քարտուղար Փիէթրօ Փարուլինի եւ պետութիւններու հետ յարաբերութիւններու գծով քարտուղար Փոլ Ռիչըրտ արք. Կալահերի հետ:

Մանչեսթրի Մէջ Ահաբեկչական Յարձակում

Շուրջ 22 զոհ եւ 60 վիրաւորներ արձանագրուեցան, երբ «Մանչեսթր Արենա»-ի մէջ 21 հազար հանդիսատեսներու ներկայութեան հանրաժանօթ երգչուհի Արիանա Կրանտէի ելոյթի աւարտէն հինգ վայրկեան ետք պայթում մը տեղի ունեցաւ:

Բրիտանական ոստիկանութիւնը յայտնեց, որ դէպքը կը նկատէ ահաբեկչական յարձակում մը: Ոստիկանութիւնը յայտնեց, որ այր մարդ մը ռումբ մը պայթեցուցած է:

Ոստիկանութիւնը աւելի ուշ նշեց, որ անձնասպանական գործողութեան հեղինակը 22-ամեայ Սալման Ապետին է:

Բրիտանիոյ վարչապետ Թերեզա Մէյ դատապարտեց Մանչեսթրի մէջ կատարուած յարձակումը՝ զայն նկատելով ահաբեկչական ահաւոր յարձակում մը:



Բրիտանիոյ քաղաքական ուժերը դէպքէն ետք, որոշեցին անժամկէտ յետաձգել խորհրդարանական ընտրութեան ծիրին մէջ իրենց քարոզարշաւը:

«Ռոյթըրը» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ ՏԱՀԵՇ-ի համակիրները ընկերային ցանցերու վրայ դէպքին համար ցնծացած են:

Աւելի ուշ, ՏԱՀԵՇ ստանձնեց Մանչեսթրի մէջ կատարուած պայթումին պատասխանատուութիւնը: ՏԱՀԵՇ յայտնեց, որ յաջորդ յարձակումը աւելի ուժեղ պիտի ըլլայ:

ԱՆՂԱՐԱՐ

Նոյնացած Երկու Արժեք (Հայ Վարժարանի Ու Տնօրենի Մը Հեքիաթ»-ը)

Ո՞վ ըսաւ, որ հեքիաթները կը պատկանին միայն գիրքերու աշխարհին: Ո՞վ կրնայ ընդմիջտ հաստատել եւ կամ կը համարձակի յայտնել, թէ հեքիաթները լոկ մտային եւ հոգեկան աշխարհի արտայայտութիւններ են. առասպել ու շինծու պատմութիւն կ'ընդգրկեն, երեւակայական հիմք ունին եւ կը ծառայեն մանուկներու ներաշխարհի զարգացման:

Այո՛, ըստ բառարաններու անոնք այդպէս են եւ պիտի մնան իբրեւ այդպիսին: Ճիշդ է նաեւ այն, որ անոնք ունին դաստիարակիչ յատկութիւն եւ կեանքի համեմը ըլլալու կարողութիւն: Անոնցմով մեր շրջապատը դարձած է աւելի բարօր, ուժեղ եւ կենսուրախ, իսկ կեանքը՝ խորիմաստ եւ ըմբռնելի:

Փաստօրէն, հեքիաթներու աշխարհին քաջածանօթ իւրաքանչիւր անհատի վայրկեանն անգամ եղած է առաւել բուրումնաւէտ եւ հեզահամբոյր. ահա մեծադիր գաղտնիքը անոնց գեղեցկութեան:

Այդուհանդերձ ինչպիսի՞ բացատրութիւն տալ հզօր երեւոյթներու, որակական շունչ ունեցող ապրելակերպերու, ազգի մը հոգեմտային շտեմարանը սնուցող կառոյցներու, քրտնաջան աշխատանքի ու անմնացորդ նուիրումի տիպար օրինակներու, որոնց ներկայութիւնը ո՛չ միայն հարստացուցած է շրջապատ մը ամբողջ, այլեւ՝ տուեալ հաւաքականութեան գոյութեան իմաստը ամրագրած ըստ ամենայնի: Մէկ տարբերութեամբ սակայն, որ անոնք՝ տուեալ երեւոյթ(ները) ուղղակի կ'առնչուին մեր կեանքին ու առանձնապէս հաւաքական միջավայրին:

Ի դէպ, նման մտորումներու յորձանուտին յանձնուեցայ, ինծի պէս շատեր, երբ վերջերս հայ մամուլի էջերուն ընթերցեցի երկու ծանուցում-հրաւեր:

Մէկը կը վերաբերի դոկտ. Զաւէն Մարըլեանի տնօրէնութեան յիսնամեակին նուիրուած հանդիսութեան մը կայացման, միւսը՝ «Հայ աւետ. քոլէճի անցնող յիսուն տարին» վաւերագրական ցուցահանդէսի մը բացման, որոնք տեղի պիտի ունենան 27 մայիս 2017-ին:

Յետ ընթերցման, զարմանալիօրէն, մտքի պաստառիս վրայ ուրուագծուեցաւ բառ մը, որ շատ համեստ է իր իմաստով, սակայն առինքնող՝ խորհուրդով:

Իրօք, բառը «նոյն» անականն էր, որմէ նաեւ՝ «նոյնանալ» չեզոք բայը եւ այլն: Պիտի ըսուի, միթէ կարելի՞ է նոյնացնել երկու երեւոյթներ, անհատականութիւններ եւ կամ արարքներ, երբ իրարմէ կը տարբերին նիւթական թէ բովանդակային առումով:

Աւելի՛ն. ճիշդ պիտի ըլլա՞յ միաձուլել, օրինակ՝ հայ վարժարանն ու տնօրէնը կամ ուսուցիչը, զանոնք մէկ հարթակի վրայ գետեղել, չէ՞ որ անոնք կը տարբերին իրարմէ. մէկը մնայուն է, միւսը՝ գնայուն: Ահա այս մտածումն էր, որ չարչրկեց մեր միտքը եւ մղեց սպիտակ էջին յանձնելու անպաճոյճ կարգ մը մտքեր, խօսքեր ի խորոց սրտի, այո՛, խօսքեր երախտագիտութեան ու խոր յարգանքի:

Խոստովանինք, որ այդքան ալ դիւրին չէ քանի մը տողով անդրադառնալ գրող-մտաւորական, ներհուն պատմաբան, ակադեմական եւ հանրային գործիչ դոկտ. Զաւէն Մարըլեանի մասին: Դիւրին չէ, ո՛չ թէ անոր համար, որ մօտէն չենք ճանչնար զինք, այլ՝ նկատի առած հայ մտաւորականին լայնածաւալ

աշխատանքը, որ կ'ընդգրկե բազում բնագաւառ եւ ունի աւելի քան վեց տասնամեակի պատմակշիռ ծանրութիւն:

Արդ, երբ շեշտը կը դնենք հայ վարժարանի անփոխարինելի առաքելութեան, անոր ունեցած ուժեղ դերակատարութեան եւ անգնահատելի ներդրումին վրայ, ապա անմիջապէս հարկ է լոյսին բերել տուեալ կառոյցին դէկը ստանձնած տնօրէնի մը ջանադիր աշխատանքը, հայ տիպար եւ ուսումնաստենչ սերունդներ պատրաստելու անոր նախանձախնդիր ոգին ու ամբողջական նուիրումը:

Յստակացնենք, որ, թէեւ մեր մտածումին կիզակէտը նշեալ վարժարանն ու տնօրէնն է, այդուամենայնիւ մտահան չենք ըրած, չենք կրնար ընել երբեք, թէ հայ վարժարանի գոյութեան երաշխիքը եթէ մէկ կողմէ հայ ծնողքն է եղած, միւս կողմէ՝ անտրտունջ ծառայութեան կոչուած ուսուցիչներն են հանդիսացած, իրենց կողքին ունենալով մեծահոգի խնամակալներու, հոգաբարձուներու եւ ազնիւ բարերարներու փաղանգ մը:

Վերը ընդգծեցինք հայ վարժարանի ու տնօրէնի մը «հեքիաթ»-ային կեանքը:

Ահաւասիկ քաղցրահունչ եւ դիպուկ օրինակ մը, որուն մասին կրնան վկայել իրերայաջորդ սերունդներ, յայտնապէս տուեալ վարժարանի (ՀԱՔ) շրջանաւարտ, երբ անոնց հարց տրուի, թէ ինչպիսի՞ յուշեր եւ տպաւորութիւններ պահած են իրենց դպրոցէն եւ մանաւանդ՝ տնօրէնէն, առանց վարանումի եւ շուտափոյթ պատասխանը կ'ըլլայ հետեւեալը, թէ ունեցած են տնօրէն մը՝ յանձին պարոն Զաւէն Մսրըլեանի, որուն ուսումնաստենչ ու պայծառ միտքը, խոնարհ ու ազնուասիրտ հոգին, լուրջ ու կարգապահ կազմաւորումը, ակադեմականի պահանջկոտութիւնը, աշխատասէր մարդու կերպարը, ազգային ու մարդկային վսեմ մօտեցումները, ժուժկալ կեանքը, բայց մանաւանդ հայրական հոգածութիւնը, անմոռանալի յիշատակներ են, որոնք մեծապէս ազդած են իրենց աշակերտական տարիներուն:

Խորքին մէջ ըսել ուզուածը այն է, թէ տնօրէնի պաշտօնին կոչուած հայ մտաւորականին, ակադեմականին թէ դաստիարակին ամենաթովիչ յատկութիւնն է եղած ապրիլ ու ստեղծագործել, սիրել ու դաստիարակել հայօրէն, եւ ձեւով մը նոյնանալ այն միջավայրին հետ, որ օրրանն է հանդիսացած մարդակերտումի եւ հայակերտումի:

Արդ, այս պատեհ առիթին, յիշատակելին կը մնայ այն, թէ յիսուն երկա՛ր տարիներու հեռաւորութեամբ եւ ծառայութեամբ յատկանշուած դոկտ. Զաւէն Մսրըլեանի անունը, վաստակն ու ներդրումը, արդէն հիմքն են տուեալ վարժարանի գոյութեան եւ ապագայ կեանքի հունաւորումին:

Փաստօրէն, իբրեւ երկարամեայ ու անխոնջ տնօրէն, վաստակաւոր կրթական մշակ ու ներհուն պատմաբան, դոկտ. Զաւէն Մսրըլեանի ներկայութիւնը գաղութահայ կեանքի թէ պատուաբեր հարթակներու վրայ ինքնին երեւոյթ մըն է, որ արժանի է բոլորիս գնահատանքին:

Երբ մեր երախտագէտի խօսքը կ'արտայայտենք իրարմով ապրած երկու արժէքներու մասին, պարզապէս անոնց նոյնացած հոգեկանութեան, գեղեցիկ ապրումներուն եւ զիրար ըմբռնելու կարողութիւնը կ'ուզենք շեշտադրել, իբրեւ գերազանց օրինակ գաղութահայ կեանքի պահպանման եւ հայաբոյր միջավայրի ստեղծումին:

Պարզապէս նոյնանա՛լ... ահա՛ գաղտնիքը բարգաւաճման եւ յաջողութիւններու:

ՀԱՍԲԻԿ ՊԻԼԱԼԵԱՆ

ԼՈՒՐԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԷՆ

Հալեպի Վերականգման Աշխատանքները Բնականոն Հունով Կը Շարունակուին. Ժիրայր Ռէիսեան

Հալեպի մէջ ընդհանուր վիճակը լաւ է, քաղաքի վերականգման աշխատանքները բնականոն հունով կ'ընթանան: Սուրիոյ խորհրդարանի պատգամաւոր Ժիրայր Ռէիսեանի խօսքով՝ Հալեպի ազատագրումէն ետք իրավիճակը աւելի լաւ է, նախկին անապահովութեան վիճակը չկայ:

«Հալեպի մէջ կրակոցներ չկան, երբեմն փոքր դէպքեր, անակնկալ ընդհարումներ կ'ըլլան, սակայն նախկին օրերու անապահով վիճակը չկայ: Քաղաքը հանգիստ է», - «Արմենփրես»-ի հաղորդմամբ՝ ըսած է Ժիրայր Ռէիսեան:



Անոր խօսքով, ջուրի խնդիրը, կարծես, չկայ, առկայ է բնական ջրամատակարարում: Քաղաքի էլեկտրականութիւնը բաւական երկար ժամանակ անջատուած էր, ժողովուրդը այս տարիներու ընթացքին հոսանք կը գներ լոյս ունենալու, անմիջական կարիքները հոգալու համար: Արդէն իշխանութիւններու ջանքերով օրական քանի մը ժամով հոսանք կը տրուի:

Քանի որ ատիկա բաւարար չէ, հետեւաբար մադիկ դեռ կը շարունակեն էլեկտրականութիւն գնել:

Հալեպի մէջ ճանապարհները հիմնականօրէն բաց են, յատկապէս քաղաքին մէջ: Քաղաքէն դուրս եւս ճանապարհները բաց են, ինչ կը վերաբերի անվտանգութեան, ապա ժամանակ առ ժամանակ դէպքեր, ընդհարումներ կ'ըլլան, ատոնց պատճառով քանի մը ժամով երթելեկութիւնը կը դադրեցուի, որպէսզի այդ երեւոյթները կանխուին: Ամէն պարագայի, ընդհանուր առմամբ, երթելեկութիւն կայ:

Քաղաքին մէջ սննդամթերքի պակաս չկայ, սակայն այս բոլորին կողքին կան տնտեսական դժուարութիւններ, եկամուտը սահմանափակ է, իսկ ծախսերը բազմապատկուած են: Պատերազմի ընթացքին սուրիական արժոյթի արժէզրկումը դարձած է ապրանքներու թանկացման հիմնական պատճառներէն մէկը:

«Դասերը արդէն կ'աւարտին, յետոյ քննութիւններն են, որմէ ետք կը սկսի արձակուրդի շրջանը: Ինչպէս գիտեք, կրթական հաստատութիւնները նորոգութիւններու կարիք

ունին, պետությունը լծուած է այդ աշխատանքին: Կը կարծեմ, որ հանգրուանային, կամաց-կամաց իրավիճակը պիտի բարելաւուի: Կը հասկնանք, որ սա, ի հարկէ, երկարաժամկէտ խնդիր է»,- ըսած է ան:

Առեւտուրի կեդրոնները բաց են, կ'աշխատին սովորականին նման, ինչ կը վերաբերի արտադրութեան, ապա անիկա շատ նախնական քայլերու փուլի վրայ է:



«Շատերն ի վիճակի չեն ամբողջութեամբ վերականգնելու քանդուած, կողոպտուած գործարանները: Քիչերը հնարաւորութիւն ունին արտադրութիւնը վերականգնելու, այն ալ ոչ ամբողջ հզօրութեամբ: Հետեւաբար կրնանք ըսել, որ արտադրողական բաժինը դեռ վերականգնուած չէ»,- ըսած է ան:

Խօսելով Հալէպէն դուրս եկած հայերու հնարաւոր վերադարձին մասին, Ժիրայր Ռէիսեան նշած է, որ որոշ տեղաշարժ կայ:

«Բնական է վիճակագրական տուեալներ չունիմ, սակայն կը լսենք անուններ, որոնք կը վերադառնան: Կրնամ ըսել, որ դէպի Հալէպ վերադարձողներ կան՝ թէ ընտանիքներ, թէ անհատներ»,- ասելցուցած է Ժիրայր Ռէիսեան:

Եւրի Ջորկայեֆ Շնորհաւորած է Միխիթարեանին . «Դուն Արժանի Ես, Իմ Ընկեր»

Ֆութպոլի աշխարհի ու Եւրոպայի ախոյեան Եւրի Ջորկայեֆ շնորհաւորած է «Մանչեսթըր Եունայթըտ»-ի եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Միխիթարեանին Եւրոպայի լիկայի գաւաթակիր դառնալու առիթով՝ թուիթթըրի իր էջին մէջ տեղադրելով Միխիթարեանի հետ լուսանկար մը:

«Այդ օրը դուն ինձի ըսիր, որ օր մը պիտի նուաճես գաւաթը: Դուն արժանի ես ատոր, իմ ընկեր: Շնորհաւորանքներս»,- գրած է Ջորկայեֆ:

«Շատ շնորհակալ եմ: Կարծես՝ դեռ երէկ լուսանկարուած ըլլանք, եւ հիմա ես հասայ իմ նպատակիս քեզի պէս»,- պատասխանած է Միխիթարեան:

Յիշեցնենք, որ Ջորկայեֆը ՈՒԵՖԱ-ի գաւաթը նուաճած է Միլանի «Ինթեր»-ի հետ:

ԱՅԼԱԶԱՆ

Ինչպե՞ս Խթանել Երեխան Առանց Հոգեկանը Ընկճելու

Ձեր երեխային դպրոցական արդիւնքները յստակօրէն նահանջա՞ծ են, անոր վրայ ճնշում բանեցնելը բանի չի ծառայեր: Ահաւասիկ քանի մը թելադրանք՝ անոր նեցուկ կանգնելու, խթանելու, որպէսզի քիչ-քիչ յաղթահարէ դժուարութիւնները:

Վստահաբար կ'ուզէք, որ ձեր զաւակը յաջողակ աշակերտ ըլլայ եւ, ինչո՞ւ չէ, օրին մէկը դառնայ բժիշկ, ճարտարապետ կամ դասախօս... Բայց դժբախտաբար բոլոր երեխաները ի վիճակի չեն իրենց ծնողներուն փափաքները իրականացնելու, եւ ասիկա ողբերգութիւն մը չէ: Ձգեցէք, որ ձեր զաւակը աշխատի իր կշռոյթով, աւելորդ ճնշում մի՛ բանեցնէք, ընդունեցէք անոր կարողութիւնները եւ օգնեցէք, որպէսզի տայ իր առաւելագոյնը:

Ահա թէ ի՛նչ կը թելադրեն բրիտանացի մանկավարժները ծնողներուն.

ա.- Ծնողներուն չափազանցուած պահանջները կրնան վնասել մանուկին դպրոցական արդիւնքներուն: Բարձրագոյնին ձգտիլը լաւ է, բայց պէտք է իրապաշտ ըլլալ:

բ.- Պէտք է քաջալերել եւ արժեւորել երեխային ճիգերը: Եթէ ան թուաբանութեան ձախող նիշ բերած է, բայց պէտք է անդին ֆրանսերէնի կամ հայերէնի արդիւնքը լաւ է՝ արժեւորել երեխային դրական կէտերը եւ նշել՝ տկարը:



գ.- Օգնել երեխային եւ անոր կողքին կանգնիլ: Դասի ժամերուն ծնողը պէտք է ներկայ ըլլայ, նոյնիսկ եթէ երեխային կողքին պիտի չնստի: Ծնողքը պէտք է ստուգէ զաւակին տնային աշխատանքները, աշխատանքին լրջութիւնն ու գիրին մաքրութիւնը, ի հարկին կարգ մը նիւթերու պարագային բացատրութիւն եւ ուղղութիւն տայ:

դ.- Հսկել, որ բաւարար քնանայ: Մասնագէտներու կարծիքով, 6-12 տարեկան դպրոցականները 9 ժամ պէտք է քնանան, որպէսզի դասարանին մէջ աւելի կեդրոնացած ըլլան եւ, բնականաբար, աւելի լաւ արդիւնք տան:

ե.- Դաստիարակիչ խաղեր խաղալ: Շատ կանուխէն երեխան սորվելու փափաք կ'ունենայ: Անոր հետաքրքրութեան գոհացում տալու համար պէտք է ժամանակ ստեղծել եւ հետը դաստիարակիչ խաղեր խաղալ (բառխաղ, յիշողութեան խաղ, փազրլ եւ այլն...), նաեւ ճատրակը շատ յանձնարարելի է ռազմավարական ունակութիւնները զարգացնելու համար:

զ.- Աշխատանքի լաւ պայմաններ ստեղծել:

Լաւ աշխատելու համար երեխան յարմարաւէտ պայմաններու կարիք ունի: Հանգստաւէտ գրասեղան մը, գրենական պիտոյք, բառարան, հանրագիտարան եւ անշուշտ լուռ եւ խաղաղ անկիւն մը անհրաժեշտ են:

Է.- Դպրոցին եւ դասատուին հետ կապի մէջ ըլլալ: Եթէ երեխային դպրոցական դժուարութիւնները կը շարունակուին, պետք չէ վարանիլ դպրոցին եւ դասատուներուն հետ խորհրդակցելու: Ճանչնալով զակնին սկար կէտերն ու կրթական բացերը՝ աւելի դիւրին կ'ըլլայ կողմնորոշուիլ եւ լուծումներ գտնելը:

ը.- Երբեմն անձնական դասերը անհրաժեշտ են: Եթէ երեխան նիւթի հետ կապուած բացեր եւ դժուարութիւններ ունի, թերեւս անձնական ուսուցիչի մը օգնութիւնը կրնայ դրական ազդեցութիւն ունենալ արդիւնքներու բարելաւման մէջ:

Գիրք Կարդալու 10 Համոզիչ Պատճառ

Արդեօք կը յիշէ՞ք, թէ վերջին անգամ երբ հետաքրքրական վեպ մը կարդացեր էք... Սովորութիւն ունի՞ք օրական քանի մը էջ կարդալու, թէ՞ մնայուն ֆէյսպուքի վրայ էք...



Ահաւասիկ 10 համոզիչ պատճառներ՝ գիրք կարդալու.

- 1.- *Ընթերցումը կ'աշխուժացնէ ուղեղը:*
- 2.- *Ընթերցումը կը նուազեցնէ ընկճախտը:*
- 3.- *Ընթերցումը կը բարելաւէ գիտելիքները:*
- 4.- *Ընթերցումը կը հարստացնէ բառապաշարը:*
- 5.- *Ընթերցումը կը բարելաւէ յիշողութիւնը:*
- 6.- *Ընթերցումը կը բարելաւէ շարադրելու ունակութիւնը:*
- 7.- *Ընթերցումը կը զարգացնէ քննական միտքը:*
- 8.- *Ընթերցումը կը բարելաւէ ուշադրութիւնը եւ կեդրոնացումը:*
- 9.- *Ընթերցումը հոգեկան բաւարարութիւն կու տայ:*
- 10.- *Ընթերցումը ձրի է:*